ԱՐՑԱԽ. ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Լեռնային Ղարաբաղում օպերատիվ իրադրությունը մընում է անփոփոխ: Արդեն որերորդ անգամ հարկ է լինում արձանագրել, որ գիշերային հրաձգությունը, հրկիզումները, գողությունները, որոնք, որպես կանոն, կատարվում են ազգամիջյան հողի վրա, ցավոք, այս կողմերի համար սովորական երևույթ են դարձել: Ըստ որում, պատահարներ են տեղի ունենում ինքնավար մարզի բոլոր շրջաններում:

Հակաօրինական գործողություններում յուրօրինակ առաջնությունը պատկանում է Ստեփանակերտի ծայրամասին՝ Կրկժան վայրին: Ահա դեկտեմբերի 13-ի լույս 14-ի գիշերն էլ այստեղ ավտոմատ և որսորդական հրացաններից կրակոցներ եղան ավանի ադրբեջանական մասից: Ջարդվեց քաղաքացի Հարությունյանի տան լուսամուտի ապակին: Տուժածներ չկան:

Դեկտեմբերի 14-ին, մոտավորապես ժամը 1-ն անց 30 րոպեին Ասկերանի շրջանի Հատանաբադ գյուղում մի անհայտ անձ պայթեցրել է միահարկ օժանդակ շինություն, որի հետևանքով այնտեղ եղած նույն շրջանի Դաշբուլաղ գյուղի բնակիչ Արմեն Ավետյանը աննշան մարմնական վնասվածք է ստացել:

Անհանգիստ էր նաև նախորդ օրերին: Այսպես, դեկտեմբերի 11-ին, ժամը 22-ն անց 10 րոպեին միաժամանակ բռնկվեցին Մարտակերտի շրջանի Առաջաձոր գյուղի բնակիչներ Մամեդովի, Բաբուշևի և Ծիրինովի տները: Այստեղ նույնպես ոչ ոք չը-տուժեց: Իսկ հրդեհը հանգցրին իրենք՝ գյուղացիները:

Դեկտեմբերի 12-ի լույս 13-ի գիշերը անհայտ անձինք թափանցել են Ասկերանի շրջանի Մաշտոցի անվան կոլտնտեսության կաթնապրանքային ֆերմա և գողացել 15 գլուխ խոշոր եղջերավոր անասուն: Տվյալ փաստի առթիվ քրեական գործ է հարուցվել: Մյուս հանցավոր ձեռնարկումների ստուգմամբ զբաղվում են ներքին գործերի Ստեփանակերտի քաղաքային և համապատասխան շրջանային բաժինները:

Ինչպես տեսնում ենք, այսօր ռեգիոնի իրադրության կայունացման մասին կարելի է միայն երազել: Առաջվա պես շրջափակված են ավտոճանապարհները, չի երթևեկում Բաքու—Ստեփանակերտ մարդատար գնացքը: Ճիշտ է, մարզային կենտրոնի երկաթուղային կայարանում սկսեն վագոններ ստացվել տարբեր ժողովրդատնտեսական բեռներով, սակայն այդ թվացյալ «նվերներից» ոչ մի մխիթարություն չկա, քանզի մարդիկ հիանալի գիտակցում են, որ բեռնատար երկաթուղային տրանսպորտի աշխատանքը ուղղակիորեն կախված է Արցախի վրա գործադրվող հուժային ճնշման տակտիկայից, որն իրականացնում է Ադրբեջանը միանգամայն որոշակի քաղաքական նպատակով՝ Ղարաբաղյան հիմնահարցի լուծում թույլ չտալու նպատակով:

Այսքան բարդ ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը գտնում է, որ անհրաժեշտ է առավելագույն ջանքեր գործադրել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման վերաբերյալ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի համատեղ որոշման իրականացման համար: Հայ ժողովրդի ապագան միայն և միայն իր ձեռքին է:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)

Ստեփանակերտ